«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿԻ Մ.ՔՈՉԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Հասցե՝ ք. Ճամբարակ, փ. Ե.Չարենց/1
Հեռ. / +374/9160-38-87
E-mail tchambarak3@schools.am
28 օգոստոս 2025թ.
N 50/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ

Տեղեկացնում եմ Ձեզ, որ << Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Մ.Քոչարյանի անվան N 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում <<Ֆիզիկա>>/8 դասաժամ/ , <<ԹԳՀԳ>> (9 դասաժամ),<<Մաթեմատիկա>> /11դասաժամ/ ուսուցիչների թափուր տեղերի համար հայտարարվել են մրցույթներ:Ուսուցիչների թափուր տեղերը համալրելու համար մրցույթները տեղի կունենան 2025 թվականի սեպտեմբերի 18-ին , ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, Մ.Քոչարյանի անվան N 2 հիմնական դպրոցում. <<ֆիզիկա>> առարկայի մրցույթ՝ ժամը 11:00-ին, <<Ինֆորմատիկա>> ՝ժամը 13:00-ին, << Մաթեմատիկա>> առարկայի մրցույթ ՝ ժամը 15:00-ին:
Կից ներկայացնում եմ մրցույթի հայտարարության տեքստը:

Առդիր՝ մեկ էջ:

Տնօրեն՝ Digitally signed by GRIGORYAN KARINE 5210610357 Date: 2025.08.28 13:15:55 MSK Կ.Գրիգորյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Մ.Քոչարյանի անվան N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության <<Ֆիզիկա>>/8 դասաժամ/ ,<<ԹԳՀԳ>> (9 դասաժամ),<<Մաթեմատիկա>>/11դասաժամ/ ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթներն անց են կացվում երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և անց է կացնում մասնակցի հետ:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում՝ (Ձև 1),
2. մեկ լուսանկար 3x4 չափի,
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3. անձը հաստատող փաստաթուղթ,
4.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5. ինքնակենսագրություն (Ձև 5),
6. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում :

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2025 թվականի **սեպտեմբերի 11-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենան **սեպտեմբերի 18-ին , ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, Մ.Քոչարյանի անվան N 2 հիմնական դպրոցում ,**<<ֆիզիկա >>՝ ժամը 11;00-ին, <<ԹԳՀԳ>> ՝ժամը 13:00-ին,<< Մաթեմատիկա>> ՝ժամը 15:00-ին:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 091-60-38-87 հեռախոսահամարով: